ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.12.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/190

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/20419-2019 գրությամբ «Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 03.12.2019թ. թիվ ԱՍ/35.1-Մ2-7/3688-19 գրության հիման վրա, 12.12.2019թ. թիվ 26/26-1/20419-2019 գրությամբ նախաձեռնել է «Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/190 ընթացակարգի շրջանակներում 20.12.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.12.2019թ. թիվ ԱՍ/35.1-Մ2-7/3688-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից կազմակերպված ՀԾԿՀ-20/2-ԳՀԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնք սահմանված ժամկետում ընկերության կողմից չեն շտկվել: Հաշվի առնելով նշվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի 526-Ն որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետը՝ ներկայացվում են ՀԾԿՀ-20/2-ԳՀԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստերի արձանագրությունների և համապատասխան մասնակցի կողմից ներկայացված հայտի (այդ թվում՝ շտկված հավելվածի) լուսապատճենները՝ «Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/190 ընթացակարգի շրջանակներում 20.12.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/190 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/190 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԾԿՀ-20/2-ԳՀԱՊՁԲ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով Ընկերությունը ճանաչվել է 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից:

3. Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի՝ Հավելված 1.1-ի, տեխնիկական բնութագրի 14-րդ չափաբաժնում նշված է «կամ համարժեք» բառերը, 15-րդ չափաբաժնում տեխնիկական բնութագիրը ամբողջական ներկայացված չէ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկումը հիմնավորող փաստաթուղթը կնքված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հիման վրա նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և ծանուցվել է Ընկերությանը շտկման վերաբերյալ՝ առաջարկվելով մինչև կասեցման ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ 14-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած: Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է ոչ միայն Հավելված 1.1-ը, այլ նաև գնային առաջարկը, այդ թվում անճշտություններով, որը հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20431-2019 գրությունը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 03.12.2019թ. թիվ ԱՍ/35.1-Մ2-7/3688-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: ***Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ***Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված

հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԾԿՀ-20/2-ԳՀԱՊՁԲ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ն և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2019թ. նիստի թիվ 2

արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով վերջինս ճանաչվել է 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արաձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի՝ Հավելված 1.1-ի, տեխնիկական բնութագրի 14-րդ չափաբաժնում նշված է «կամ համարժեք» բառերը, իսկ 15-րդ չափաբաժնում տեխնիկական բնութագիրը ամբողջական ներկայացված չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկումը հիմնավորող փաստաթուղթը կնքված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հիման վրա նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և ծանուցվել է Ընկերությանը շտկման վերաբերյալ՝ առաջարկվելով մինչև կասեցման ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ 14-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած: Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է ոչ միայն Հավելված 1.1-ը, այլ նաև գնային առաջարկը, այդ թվում անճշտություններով, որը հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: <u>Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:</u>***

Միաժամանակ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի

Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով, վերը նշված իրավակարգավորումներով հստակ սահմանվում են այն գործողությունները, որոնք պետք է իրականացվեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու, ինչպես նաև ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում:

Ուսումնասիրելով «ՀԾԿՀ-20/2-ԳՀԱՊՁԲ» ծածկագրով ընթացակարգը՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, Կարգի 41-42-րդ կետերով սահմանված պահանջների խախտումներ, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.11.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետով Ընկերությանը 15-րդ չափաբաժնի մասով ճանաչել է հաջորդաբար տեղ (2-րդ տեղ) զբաղեցրած մասնակից, որից հետո, սակայն նույն արձանագրությամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա է անհամապատասխանություն, մինչդեռ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով հստակ սահմանվում է, որ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցները որոշվում են, երբ վերջիններիս հայտերը հրավերի պահանջների նկատմամբ բավարար են գնահատվում:

Միևնույն ժամանակ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը, քանի որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի

հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15-րդ չափաբաժնի մասով Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.1-ում, արձանագրելով անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, 26.11.2019թ. Ընկերությանն ուղարկված ծանուցման մեջ մանրամասն չի նկարագրել հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ նման պայմաններում Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով առկա չէ Ընկերության կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի 14-րդ չափաբաժնին, ապա արձանագրում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված պարտավորության խախտում, քանի որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետով սահմանված կարգով ծանուցվելուց հետո, Հավելված 1.1-ի շտկված տարբերակը ներկայացրել է առանց էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը Հավելված 1.1.-ում էլեկտրոնային ստորագրության բացակայության վերաբերյալ անհամապատասխանությունը շտկելու նպատակով ծանուցելուն, ապա գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջը, համաձայն որի՝ անհամապատասխանությունը չշտկելու դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում: Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման հնարավորությունը կրկին անգամ կիրառելը չի կարող հանգեցնել Ընկերության կողմից թույլ տրված խախտման փաստը չարձանագրելուն:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ***Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ն Ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի

6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, և առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերության կողմից որպես շտկում ներկայացված Հավելված 1.1-ը ստորագրված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի պահանջը սահմանված է Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/20419-2019 գրությամբ «Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել. «Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**